օգտուիլ Երզնկացի[1]։ Յովհաննէս կը յիշէ իրեն ուրիշ ուսուցիչ մը ալ Կայենոյ ձոր վանքին մէջ՝ ուր ուսման համար գացած էր՝ Վարդան վրդ. Արևելցի կամ Բարձրբերդցի, զոր Նիկ. Մառ կը շփոթէ Վարդան Այգեկցիի հետ և կը համարի թէ Վ. Այգեկցի ծերութեան մէջոց առանձնացած ըլլայ Սեպուհի անապատը, և հոն անոր աշակերտած է Յովհ. Երզնկացի. ինչ որ բոլորովին անհիշդ է։ Երզնկացի վայելեց նաև Տարօնի Ս. Կարապետ վանքին Յովհաննէս կոչուած հմուտ և Ս. Գրոց մեկնիչ վարդապետին քաջալերանքը։ Այսպէս ժամանակի պայմաններէն օգտուելով, որքան կարելի էր, կրցաւ այնքան գիտութիւն ամբարել ինքնաշխատութեամբ որ ամէնուն պատկառելի դարձաւ և յետոյ ամէնուն վարդապետեց։

Յովհաննէս զանազան մակդիրներով մեզի կը ներկայանայ հիներու քով։ Առաջին և սովորականն է Երզնկացի կամ Եզնկայեցի անունը, տրուած Երզնկա ծնած ըլլալուն համար[2]։ Բաղդով՝ կ'ըսէ Հ. Ալիշան, այս վարդապետին բուն իր ձեռքով գրած մէկ գիրքը տեսայ, ուր գրեր էր. «Նուաստ և տկարագի Յոհաննէս Եզնկայեցի սպասաւոր քանի» ևն., ուր և տգէտ անձ մը Եզնկայեցի բառին ետքի գրերը քերեր և Եզնկայ եպիսկոպոս ձեւացուցեր էր[3]։

Երկրորդ մականուն մը տրուած է իրեն Պլուզ մակդիրը որ կը կարծուի թէ կապուտաչուի ըլլալուն համար ըսուած է[4]։ Սակայն Հ. Ալիշան ուրիշ մեկնութիւն մըն ալ կ'աւելցնէ, «կամ մանաւանդ հասակաւ պզտիկ ըլլալուն համար. Երզնկացիք հիմակ ալ պզտիկ կ'ըսեն և ոչ պզտիկ[5]»։ Գրիգոր Կամախեցիի մօտ կը հանդիպինք «Կիրակոս Պլուզ»ի մը, առանց սակայն այդ անձին Պլուզ կոչուելուն մասին բացատրութիւն մը գտնելու[6]։ Իսկ շարականոցի մը մէջ թուղթ 197բ գրուած 1312ին և կը գտնուի Վիեննայի Մխիթ. մատենադարանը Թ. 202, «Կանոնն թոռանցն սրբոյն Գրիգորի, որ զլոյս Աստուածային Բրիստոսի գիտութեան» ևն հատուածին հետ լուսանցքին վրայ գրուած է «Յոհաննու Պլուզացոյ ասացեալ[7]»։ Պլուզացւոյ կամ Պլուզացոյ ձևին ուրիշ տեղ բնաւ հանդիպած չեմ և անբացատրելի կը մնայ։

Յ. Երզնկացիի երրորդ մականունն է Մորձորեցի յորջորջումը զոր կը մեկնեն Հ. Ալիշան, Օրմանեան երկայն ատեն Արտազ գաւառի Մորձոր գեղին Ս. Աստուածածնի վանքը բնակելուն համար[8]։ Կամախեցիի քով քիչ մը տարբեր մեկնութեան կը հանդիպինք, Մորձոր տեղւոյն նկատմամբ. «Սա մականուամբ Մորձորեցի կոչի վասն Մորակ գեղջն, որ այժմոյս Մարացիք կան բնակեալ որ ազգաւ քուրդ են։... Եւ այս ալ ի Սեպուհ լերանցն ստորոտն լինելով, ի քուրդ անուանի չար գեղջին՝ Բարջանջի և Աուբտոցի? և Զորակի զլիսոյն վերայ գոլով դաշտաձև տեղի մի ի մէջ ձորոյն որպէս զվանքն Սերովբէից ի ժամանակս քրիստոնէութեանն որ ի վանքն այն քուրդ ոչ լինելով այլ բուն Հայք, յայնմ ժամանակին այս Յովհաննէս այլ Երզնկոյ լինելով և բնակելով ի վանս Մորձորի[9]»։

Ուրիշ չորրորդ մականուն մըն ալ ընծայուած է Յովհ. Երզնկացիի ձեռագիր շարականի մը մէջ հին կարգաւորութեամբ գրուած և աղէկ գրով՝ նման Յովհաննու ձեռագրի գրին՝ Հ. Ալիշանի համեմատ, և ուր՝ տեղ մը գրուած է այս պզտիկ յիշատակարանը. «Յովհաննէս Եզնկացւոյն է գիրս մականուն Մաշածին[10]»։ Թէ ինչ պատճառաւ տրուած է այս մակդիրը Երզնկացի

1. Յուշիկք. Բ. հա. էջ 415։
2. Յուշիկք Բ. էջ 414։ Ազգապատում Բ. Մաս. էջ 1796։
3. Յուշիկք՝ անդ։
4. Յուշիկք՝ անդ։ Ազգապատում՝ անդ։ Saint Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris. 1818. Բ. հա. էջ 467։
5. Յուշիկք՝ անդ։
6. Գրիգոր Կամախեցի, Ժամանակագրութիւն, էջ 52։
7. Տաշեան, Ցուցակ Ձեռ. էջ 524։
8. Յուշիկք՝ անդ։ Ազգապատում՝ անդ։
9. Ժամանակագրութիւն. էջ 401–402։
10. Յուշիկք՝ անդ։